ՆՈՐ-ԴԱՐ

№ 2 ՁՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ Զորեքշաբթի 14 Յունվարի 1887 Զորեքշաբթի 14 Յունվարի ՁՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 2

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ., մէկ ամիսը՝ 1 ր. 50 կ., հասով՝ 5 կոպէկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բաւին 2 կ., բեկլամների համար կրկնապատիկ։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ

Մեր այն բաժանորդները, որոնք դեռ բաժանորդ չեն գրուած, խնդրում ենք, որ շտապեն բաժանորդ գրուելու, եթէ կամենում են ներկայ 1887 թուականին ստանալ «Նոր-Դար»-ը։ Բաժանորդագրութիւնը շարունակվում է. բաժանորդագինը տարեկան 10 րուբլի է։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Լուրեր։
Թղթակցութիւններ. — Շամախի։ Ուստր։
Քաղաքական. — Քաղաքական տեսութիւն։ Լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրները։
«Նոր-Դար»-ի պատասխանները։
Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Ֆրանսիացի քիմիկոս պրօֆէսսօր Պաստէօրը անցեալ տարի հռչակուեցաւ և Ֆրանսիայից դուրս՝ կատաղած շնից և գայլից խածուածներին բժշկելու համար՝ իր գտած պատուաստելու միջոցի շնորհիւ։

Եւրոպական մամուլը իր ժամանակին զբաղուեցաւ այդ դիւտի մանրամասնութեամբ։

Անցեալ տարի «Նոր-Դար»-ի ընթերցողներին ծանօթացնելով Պաստէօրի դիւտի հետ—հրաւիրեցինք մեր տեղական բժիշկների և բժշկական ընկերութեան ուշադրութիւնը գլխովին վերայ, իբրև կատաղութեան դէմ մի տեղական և վաղուց փորձուած և երկրում գործ դնուող միջոցի վերայ։

Բայց մինչև օրս էլ դեռ յայտնի չէ մեզ, թէ մեր երկրի բժշկական ընկերութիւնը հետազօտած լինի այդ ալքալոյնդը և որոշած՝ թէ ո՞ր աստիճանի օգտակար միջոց է դա կատաղութեան ախտի դէմ։

Այժմս ռուսական մի թերթի մէջ մի պարոն աղերսելով առաջարկում է, որ Ռուսիայի բժշկական ժողովում յարուցուի կատաղութեան ախտի դէմ ժողովրդական միջոցների գործադրութեան խնդիրը։ Այդ պարոնը ասում է, որ Պաստէօրի գտած միջոցը այնքան էլ յաջողութիւն չունեցաւ և՝ նրա միջոցը կարող է ծառայել իբրև նախագուշակութեան միջոց այն ինչ կան ժողովրդական միջոցներ (ինչպէս կովկասում), որոնք յաջողութեամբ գործ են դնվում կատաղութեան դէմ։ Ինչու՞ չհետազօտել միջոցները և բժշկական փորձեր չանել ժողովրդական այդ միջոցներով, հարցնում է այդ պարոնը, և աղերսելով խնդրում է, որ բժշկական ժողովը իր նիստերում ուշադրութիւն դարձնէ այդ բանի վերայ։

«Նոր-Դար»-ը անցեալ տարի հրաւիրեց տեղական բժշկական ընկերութեան ուշադրութիւնը ալաքլոյնդի վերայ, ի նկատի ունենալով ժողովրդի բարօրութիւնը և այն հանգամանքը, որ բժշկութիւնը ըստ ինքեան էմպիրական, այսինքն փորձի վերայ հիմնուած դիտութիւն է և թէ ամենօրեայ փորձը ցոյց է տալիս, որ մեր երկրում կան այնպիսի բժշկական ցոյժ կարևոր միջոցներ, որոնց մասին մեր բժիշկները գաղափար անգամ չունին, բայց դրանք չատ օգտաւէտ միջոցներ են ցաւագար մարդկութեան համար։

—

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԻՑ.—Այստեղ կատարեալ հիւսիս է, քաղաքը ծածկած է ձիւնով և կառքի տեղ սահնակ է բանում։ Այս վերջին տարիներում կլիմայական պայմանները փոխուել են, այստեղ ձիւն և սառոյց է, իսկ Ռուսիայի չատ տեղերում կամ ձիւն դեռ չէ եկել կամ եկածն էլ չատ քիչ է։

Մարդասպանութիւն և աւազակութիւնը սովորական բան է դարձել։ Յունվարի 5-ին, գիշերը դեռ մինչև այժմս անյայտ մնացող աւազակների մի խումբ մորթում է Մօրօ ֆրանսիացու ընտանիքը։ Գաղթական ֆրանսիացի Մօրօն առաջ զինուորական ծառայութեան մէջ էր և վերջերումս ծառայութիւնից դուրս եկած հիւրանոց էր պահում առանց յաջողութեան։ Վերոյիշեալ գիշերը աւազակները մըտնելով Մօրօյի բնակարանը, չարաչար կտրատում են իրեն Մօրօյին, նրա կնոջը նրա երեխային և ծառային։ Ասում են, որ տեսարանը սոսկալի և ազեաալի էր։ Յունվարի 7-ին թաղեցին սպանուածներին։ Ամբողջ քաղաքը յուզուած է։

—

«Նոր-Դար»-ին բաժանորդ գրուողներից չատերը ուշ բաժանորդ գրուելով՝ չատ ծանրացնում են խմբագրութեանս վարչական գործը։ Յունվարի 13-ն է և դեռ չատ հասցէներ տպագրուած չեն և խմբագրութիւնս չգիտէ մօտաւորապէս իւր բաժանորդների թիւը, որպէս զի կարողանայ որոշել տպագրելիք համարների թիւը։ Այսպէս խմբագրութիւնս չգիտէ, թէ հետզհետէ նոր բաժանորդ գրուողներին ո՞րտեղից սկզբից ներկայ համարս առաջին համարը, քանի որ այդ համարից միայն մի քանի հատ է մնում խմբագրատանը։ Սոյն երկրորդ համարը աւելի մեծ քանակութեամբ ենք հրատարակում։

—

Յունվարի 11-ին Թիֆլիսի ժողովարանում Կովկասեան Հայոց և Հայուհեաց բարեգործական ընկերութիւնների օգտին տեղի ունեցաւ երեկոյթ, որին ներկայ էր մեծ բազմութիւն։ Պէտք է ասել, որ չատ քիչ են պատահում այդպիսի յաջող երեկոյթներ։ Այդտեղ տեղի ունեցաւ և վիճակախաղ, որի տոմսերը մինչև կէս գիշեր արդէն ծախուել վերջացել էին։ Ընդհակառակ, որ այդ մեծ հասարակութեան համար տոմսակները չատ փոքր էին, բայց և այնպէս պարերը մինչև ժամը 4 տևեցին։

—

ԲԵՐԴԵԱՆՍԿԻՑ մեզ գրում են.—Անցեալ տարի մինչև դեկտեմբերի վերջերը եղանակը լաւ լինելով, չոգնաւերն էլ անդադար երթևեկում էին Օդեսայի և Տագանրոգի մէջ։ Նաւերը գլխաւորապէս բարձում էին մեծ քանակութեամբ ցորեն և ուրիշ հացազգեաներ։ Բայց ահա այս տարուայ յունվարին սկսուեցին սաստիկ ձիւն և արևելեան ցուրտ քամիները և առևտուրը կամաց կամաց ընկնել սկսեց։ Ամեն բանի առատութիւն է. մանաւանդ լաւ է ցորենի առևտուրը, որի չէավէրտը (10 պուդ) գնում է 12—13 րուբլի։ Իւղի պուդը—10 րուբլի է, մսի ֆունտը՝ 8 կ., 10 ձուն—15 կ., հաւը՝ 20—25 կոպէկ։ Այս տարի նոյնպէս էժան է և մրգեղէնը։ Լաւ խնձորը—5 կ. ֆունտը, խաղող՝ 10 կ., Ղրիմի կաղին—պուդը 2 ր. 80 կ., բայց թանկ է Թրքական կաղինը, որի պուդը գնում է 5 ր. 40 կոպէկով։

—

Ռուսաց ազգային կրթութեան մինիստրը նոր օրինագիծ է կազմել Ռուսական դպրոցների փոխարէն արուեստագիտական ուսումնարաններ բանալու համար։ Այս օրինագծի զօրութեամբ եօթ դասարանական ըէալական ուսումնարանները դառնում են հինգ դասարանական, որից դուրս եկողները իրաւունք չպիտի ունենան բարձրագոյն մասնագիտական ուսումնարաններ մտնելու։

—

ՋԻՒԱՄԼՈՒԻՑ (Գառնիբասարու գաւառ) մեզ գրում են.—Այն միջոցին, երբ ամբողջ Գառնիբասարի գաւառն ոչ մի գիւղում դպրոց ասած բանը չկայ, մեր գիւղում գտնվում է մի փառաւոր դպրոց յատկապէս ճարտարապետի նախագծով (պլան) շինուած, հոլանդական վառարաններով վեց սենեակից բաղկացած և այնպիսի յարմարութեամբ, որ եթէ սենեակները չբաւականանան աշակերտների համար, կարող են նրանց կից չինել և մի քանի ուրիշ սենեակներ՝ այնպէս որ տեսնողի աչքին մի չենք երևիր փառք և պատիւ թէ ժողովրդին և թէ իրենց քահանաներին՝ որոնցից մինն է գաւառի գործակալ Տէր Սիմէօնը՝ որ հոգաբարձուների հետ հոգալով ուսումնարանի բոլոր պիտոյքները՝ պատասխ է ուսուցիչների «հաստատութեանը» գալուն։ Չնորհակալութեան արժանի է Սիմէօն քահանան, որ ինչպէս իրեն գիւղի, այնպէս էլ ամբողջ գաւառի համար աշխատում է դպրոցներ բանալ և եկեղեցիները բարեկարգել։

—

Մեզ հաղորդում են, որ մօտ ժամանակներս քաղաքիս Շաւի-Գիւղ կոչուած թաղում վախճանուեցաւ 125 տարեկան հասակում մի վրացի կին և թողեց 70-ի չափ՝ զանազան ընտանիքներին պատկանող երկու սեռի անձեր, որոնք բոլորն էլ սերուած են նրանից։ Հանգուցեալը իր կենդանութեան միջոցին տեսել է իր թոռան թոռներին և մէկ և քառորդ դար ունեցած իր կեանքում ոչ մի անգամ չէ հիւանդացել, եթէ միայն հաշուելու չլինինք ծաղիկ, կարմրուկ և այլ բնական հիւանդութիւնները։ Հանգուցեալը մինչև իր կեանքի վերջին օրերը պահպանել էր իր բոլոր անդամների բաւականին առողջութիւն, միայն վերջին տարիներս հանգուցեալը ննջարկուած էր ուղեղի տկարութեան։

—

ԱՐՏԱՇԱՏԻՑ.—Պ. բժիշկ Արամեանցը Բայգեառնու եկեղեցու 50 րուբլիանոց լուզագործ պատկերին չէ հաւանում, ասած եթէ նա Գառնիբասարու եկեղեցիները միառժմ հեռանալուզած լինէր և տեսնէր որ այդ վիճակի եկեղեցիներից չատերի մէջ կախուած են լուսանկար պատկերներ և այն հասարակ թղթի վերայ՝ ինչ պիտի աչբս Զարմանալի անհոգութեան է մատնուած այս վիճակը, ամեն բան խառնուած է այստեղ... Այս վիճակում ոչ եկեղեցիների բարեկարգութիւն կը տեսնես, ոչ օրինաւոր ժամերգութիւն և ոչ էլ ժողովրդի մէջ օրինապահութիւն. մեր ս. հայրերը մենք կարծում էինք փեննէհէս քահանայի նման գործակալութեան պաշտօնին ցանկանալով՝ նրա նման ժողովրդի արդարութեան և հոգևոր պարտաւորը վրէժխնդիր կը լինին բարի օրինակ տալով, և եկեղեցիների ժամերգութիւնը, բարեկարգութիւնը և մաքրութիւնը տեղը պահելով. բայց մենք ընդհակառակն ենք տեսնում։ Դարձնում ենք հոգևոր բարձր իշխանութեան քաղցր ուշադրութիւնը այս խեղճ վիճակի վերայ։

—

ԱՐԴԱԲԻԼԻՑ (Պարս.).—Թէև մեր մէջ ևս վերջի ժամանակներս երևում է չարժուն, ձգտումն դէպի առաջադիմութիւն, բայց միւս կողմից նոր սերունդի մէջ մտնում են և վատ սովորութիւններ, որոնք կոլատաբեր ազդեցութիւն են գործում նրա զարգացման վերայ։ Այդ վատ սովորութիւնների մէջ պէտք է յիշել դիւաւորապէս «զուարթաղութիւնը», որ սաստիկ զարգանում է և վնասներ է առաջացնում։

Ցորենի խալվարը (33 պուդ) 45 դրան է, գարին՝ 47 դրան 10 շահի, պօլուխմպերիալը 26 դրան 10 շահի, մի րուբլի թղթադրամը—երեք դրանոչխարի մսի լիտրը (14 ֆունտ) 2 դրան։

—

Յունվարի 7-ին, Նոր-Նախիջևանից մեզ հեռագրում են. «Երկարատև հիւանդութիւնից յետոյ, այսօր վախճանեց Կոկօյեան ուսումնարանի տեսչուհի օրիորդ Թամամշեանը։ Այս մեծ կորուստը տղրում են որպէս ուսումնարանի սանուհիները, նոյնպէս և ամբողջ հասարակութիւնը»։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ Շ. մեզ գրում է.—Այս տարի ձմեռը չափազանց ցուրտ է։ Դեկտեմ. 31-ին ցուրտը R. (Ռէօմիւրի) ջերմաչափով 24° էր։ Գաւառս մէջ դեկտեմբեր ամսին սաուեցան երեք հոգի։ Առևտուրը չատ մոյլ է։ Յունվարի 1-ին կաղանդի օրը այս տարի չունէր այն չքեղ տեսքը, որ միշտ ունենում էր առ հասարակ։ Ոչ նախկին ուրախութիւնը կար և ոչ հրացանաձգութիւնը։ Այս երևոյթը նրանով են բացատրում,—թէ ժողովրդի մօտ չկան նախկին աշխատանքները։

—

Կիրակի, յունվարի 4-ին Թիֆլիսի քաղաքային խորհրդում տեղի ունեցաւ նոր իրաւասունների երդուեցումը և քաղաքագլխի ընտրութիւնը։ Երդուեցումից երևեցաւ, որ ներկայ եղող իրաւասուններից 48 հայազատաններ են, 11 ռուսազգաւան, 4 կաթոլիկ և 1 լուտերական, որոնց երդուեցնում էր իւրաքանչիւրին՝ իւր քահանան։ Ա. Խնուհեան սկսուեցաւ քաղաքագլխի ընտրութիւնը։ ընտրուեցան հինգ հոգի, որոնցից չորսը հրաժարուելով քուէարկութիւնից, միայն պ. Ա. Ս. Մատինեանը, որին քուէն գնեց լուց ստացուեցաւ 55 ընտրողական, իսկ 9 ոչ ընտրողական քուէներ։ Պարոն Մատինեանի ընտրութիւնը ընդունեցաւ բուռն ծափահարութիւններով, որին չնորհակալ գալով պ. Մատինեան ասաց, որ իւր կրկին ընտրութիւնը համարում է իրեն համար ամենամեծ վարձատրութիւն. բայց նա այս վարձատրութեան արժանացել է իրաւասունների աջակցութեամբ, որոնք միշտ համերաշխ են եղել իւր հետ և յոյս ունի, որ նոր իրաւասուներն էլ միևնոյն հոգով պիտի աշխատեն։ Ի վերջոյ նորընտիր քաղաքագլուխը յայտնեց, որ չի խոստանալ ոչինչ բացի այն, որ «մինչ որ էի նախընթաց 8 տարիներում, այժմ էլ նոյնը կը լինամ»։

—

Յունվարի 8-ին Թիֆլիսի դրամատիկական ակումբի խումբը ներկայացրեց «Նարդիս» դրաման։ Այս, թէև արդէն տասնհօթերորդ ներկայացումն է, բայց հազիւ այդքանից մի քանիսը միայն աջող անցած լինին, իսկ միւսները առհասարակ թոյլ էին... Թոյլ էին պիէսաները, թոյլ էին և դերասանների լեզուները... և միշտ էլ ժողովուրդ չատ սակաւաթիւ է եղել։ Այս անգամ օթեակները բոլորը գատարկ էին, իսկ միւս տեղերից էլ մեծ մասը նոյնպէս գատարկ։ Եղողներից էլ մեծամասնութիւնը ոչթիֆլիսցիներից էին։

Յունվարի 12-ին հայ թատերական խումբը պ. Օ. Կիւրեղեանի օգտին ներկայացրեց «Պարիզու աղքատները» և «Երկու պօլսեցիներ Թիֆլիսում»։ Կիւրեղեան և Ադամեան խաղում էին գլխաւոր դերերը. թատրոնը չենք կարող ասել որ լիքն էր, բայց բաւական մարդ կար։ Ընդհանրապէս ներկայացումը լաւ անցաւ, աւելի լաւ՝ քան երբ և իցէ այս սեզոնին։ բուռն ծափահարութիւններ ստացան տ. Գոհարիկ, պ. պ. Ադամեան և Կիւրեղեան—մանաւանդ Կիւրեղեան՝ որ բարեխղճութեամբ էր կատարում իւր դերը։ Պ. Կիւրեղեան ստացաւ և երկու թանկագին ընծաներ։

Հինգշաբթի, յունվարի 15-ին կը ներկայացնեն «Ելի մէկ գոհ» և Շիլլերի «Աւազակներ»-ից Ֆրանց-Մօրի մասը. վերջինը կը կատարէ պ. Ադամեան։

—

ՏՐԱՊԻԶՈՆԻՑ (Թիւրքիա).—Այստեղ կատարեալ գարուն է և ամեն օր պարզ արև. չատ գեղեցիկ է մանաւանդ «Բէչ-Թէփէ» աստած լեռը, որ ծովի արևելեան կողմից մի ուղղահայեաց պատ է ներկայացնում և չափաւոր զառիվայրով իջնում է դէպի քաղաք։

Առևտուրը այժմ բաւականին լաւ է։ Քաղաքիս հայ հասարակութիւնը չատ սիրում է իւր ս. Առաջնորդին։ Բայց անցեալ օրեր կարդացինք Կ. Պօլսի հայ լրագիրներում, որ իբր թէ ամենապատրիարքը ցանկանում է գնր. Սբրուանձտեանցին ուղարկել Տարօնի Իննակնեան ս. կարապետ վանքը

ՊԱՏԱՐԱԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ — ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ի ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆ ՀԱՐՅՈՒՐԱՆՈՑ ՀԱՐԱՒԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆ ՀԱՐՅՈՒՐԱՆՈՑ ՀԱՐԱՒԱՆՈՒԹԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

— Ինչպե՞ս է հայերի վերաբերմունքը ռուսների նկատմամբ Կովկասում։

— Ռուսների նկատմամբ հայերի վերաբերմունքը նույնն է, ինչ որ ամբողջ Ռուսաստանում։ Ռուսները հայերի համար ոչ թե օտարներ են, այլ եղբայրներ։ Ռուսների հանդեպ հայերի սերը ծնվել է դեռ այն ժամանակներից, երբ Վրաստանի հետ միասին Հայաստանը ընկավ Ռուսաստանի հովանավորության տակ։ Ռուսների հանդեպ հայերի սերը ամրապնդվեց ռուսական զորքերի հետ միասին Կովկաս եկած ռուս պաշտոնյաների հետ

Վիճակախաղում հանգած տոմսերի սերիաները

216	5938	15475	1662	17324
14600	14036	16658	2499	16926
945	714	1933	11380	5233
9888	18776	14383	4290	13205
4627	18317	17741	19148	15087
1239	16881	9554	6710	19783
19568	18327	4617	903	9089
19468	17277	16954	3505	2190
1985	7483	17390	19813	2478
9317	7773	13092	1093	18836
8035	18891	15586	1921	8564
2217	11780	16808	10400	17880
4719	3036	19346	8601	7690
7964	1988	3718	1659	12176
8418	19539	3347	1892	10292
4996	1570	1808	17347	11617
6877	5468	14444	14773	

Հանգած տոմսերի վճարումը 125 ական րուբլիով կը սկսուին սոյն 1887 ապրիլի 1-ին պետական բանկում, նրա կանտօրներում և բաժանմունքներում։

ԲԵՐԼԻՆ, 2 Յունվարի։ Պարլամենտի երէկուայ նստում իշ. Բիսմարկը կարդաց լրագրական յօդուածները, որոնց մէջ պահանջվում է, որ Գերմանիան արգիլէ Ռուսիային Կ. Պօլսին մօտենալու։ «Այստեղ, ասաց իշ. Բիսմարը, գուցէ չօշափվում են Անգլիայի շահերը. բայց ինչ վերաբերում է Գերմանիային, խաղաղութիւնը պահպանելու ծանր խնդիրը կայ նրա վերայ. նա միջնորդ է լինելու բարեկամ պետութիւնների մէջ։ Եթէ Ռուսիան յարձակուի մեր վերայ, մենք կոմենում ենք, պարտական ենք և պէտք է պաշտպանուինք մինչի արեան վերջին կաթիլը։ Բայց Ռուսիան ոչ մի պատճառ չունի մեզ վերայ յարձակուելու, մենք և նոյնպէս պատճառ չունինք նրա վերայ յարձակուելու»։ Իվերջոյ Բիսմարկը ասաց, որ կառավարութիւնը խախտած չի լինիլ սահմանադրութիւնը՝ պարլամէնտը արձակելով և պահանջում է պերնգասէս օրինագիծը 7 տարով քուէարկել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 Յունվարի։ Թիֆլիսի և Քուլթայիսի հողային բանկերի գրաւաթղթերը գնում են 97½ րուբլիով։ Թիֆլիսի քաղաքային փոխատու ընկերութեան օբլիգացիաները գնվում են 84 րուբլիով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 Յունվարի. Պետական գանձարանի դէպարտամէնտի վերատեսուչ Տերները նշանակուած է ֆինանսների մինիստրի օգնական։

ՀՌՕՄ. Այսօր առաւօտ այստեղ եկան բօլղարական պատգամաւորները. ոչ մի համակրական ցոյց չեղաւ։

ՅՈՒՐՅԵՎՕ. Բօլղարական կառավարիչները ազազակային խմբեր են կազմում երկրի ներսը անիշխանութիւն առաջացնելու համար։ Հարուստ քաղաքացիները պատրաստվում են արտասահման փախչելու։

ՄՕՍԿՎԱ. Այսօր, ցերեկուայ ժամը 2½-ին, պօլիտէխնիկական մուզէում, ընդհանուր նահանգապետի, ուսումնարանական շրջանի վերատեսչի, բազմաթիւ բարձրաստիճան անձերի, պրօֆեսօրների, բժիշկների և ամբոխի ներկայութեամբ կատարուեցաւ հոգեբան—բժիշկների առաջին նստի հանդիսաւոր բացումը։ Բժշկական շրջանի կառավարիչ Օստրօգլազովը մի ճառ խօսեց, ողջունելով հաւաքուողներին. այնուհետև պրօֆեսօր Կօվալեվսկին կարդաց աւելի քան 100 բժիշկների անուններ, որոնք մասնակցում են համագումարին, իսկ պրօֆեսօր Չեչօտը կարդաց զեկուցումների ցուցակը։ Այնուհետև Օստրօգլազովը յայտնեց, որ ժողովի նախագահ ընտրուած է գինուորական-բժշկական ճեմարանի պրօֆեսօր Յ. Պ. Մերժէեվսկին։ Վերջինս խօսեց մի ճառ, որի մէջ ցոյց տուեց հոգեկան հիւանդների շատանալու պատճառները Ռուսիայում և այն միջոցների մասին, որ պէտք է գործ գնել այդ ախտի դէմ։ Ճառախօսութիւնը ընդունուեցաւ միահամուռ ծափահարութեամբ։

ՎԻԵՆՆԱ. «Corresp. Bureau»-ն պաշտօնապէս յայտարարում է, որ բօլղարովին անհիմն է Պեսիչ այսօր հաղորդուած այն լուրը, իբր թէ հեծելազօր ռմբաձիգ գնդեր Տեմեշվարում հրաման են ստացել պատերազմի պատրաստուելու, իսկ պահեստի զօրքին՝ պատրաստ գըտնուելու։ «Korrespon. Bureau»-ն այս լուրը կատարելապէս մատացածին է համարում։

Կ. ՊՕԼԻՍ. 6 Յունվարի։ Յանկօվը այստեղ եղող բօլղարների ճառին պատասխանելով, յայտնեց, որ բօլղարական ճգնաժամին շուտափոյթ վերջ կը դրուի Ֆ. Դրան օգնութեամբ։

ՍՕՖԻԱ. Բօլղարական կառավարիչները անհանգստանալով վերջին լեզուախռութեան մասնակից սպասների Օգեսսալից Կ. Պօլիս վերադառնալուց, զգուշութեան խիստ մեծ միջոցներ են գործ դնում թրքական սահմանագծի վերայ, վախենալով որ մի գուցէ թշնամական ցոյցեր անեն դրանք։

ՀՌՕՄ. Ինչպէս լսվում է, բօլղարական պատգամաւորները, որոնցից այստեղ առ այժմ միայն Կալչէվն է գտնվում, մտադիր են իտալական կառավարութեան խրնդրելու, որ նա իւր վերայ առնէ Ռուսիայի և խնամակալութեան մէջ միջնորդի դերը։

ԲԵՐԼԻՆ. Գերմանական բանկը դիսկօնտը իջեցրեց. մուրհակները մինչի 4%-ի, պետական թղթերը 4½%-ի, իսկ մնացած դին ունեցող թղթերը-5%-ի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 7 Յունվարի։ Ատատաճայտնութեան օրը տօնուեց սովորական հանդիսաւորութեամբ։ Պատարագից յետոյ սկսան յորդանան դուրս գալ։ Թագաւոր Կայսրը, մեծ իշխանները և արքունիքի պաշտօնեաները հետևում էին հանդէսին։

Չինուորական մինիստրի հրամանագրով արգիլվում է բոլոր զինուորական վարչութեան մէջ ծառայողներին և զինուորական ուսումնարանների աշակերտներին առանց թոյլտուութեան հասարակական բնաւորութիւն ունեցող հանդէսներին մասնակցել։

«С. Пет. Вѣд.»-ն հաղորդում է, որ արտահանուած ցորենի քանակը նուազելու պատճառով նոր կազմվում է անդրծովեան ապրանքների համար ամենավոքրագոյն ճանապարհածախսի օրինագիծ, որի ճշմիւ գործադրութիւնը պէտք է պարտաւորեցուցիչ լինի երկաթուղային ընկերութիւնների համար։

ԽԱՐԿՕՎ. Երէկ տեղի ունեցաւ կրեշչենսկի տօնավաճառի պաշտօնական բացումը։ Սպասում են, որ բազմութիւնը շատ կլինի։

ՀՌՕՄ. Արտաքին գործերի մինիստր գեներալ Րօբիլանը, երէկ բօլղարական պատգամաւորութիւնը ընդունելիս, նրան ուղղակի ասաց, որ իսկոյն, պատգամաւորութիւնը Սօֆիա վերադառնալուն պէս բօլղարական կառավարիչները պէտք է վերջնական վճիռ կայացնեն։ Հարկաւոր է ընտրել երկուսից մինը,—կամ այսուհետև էլ շարունակել ներկայ, ժամանակաւոր դրութիւնը, որ, սակայն Եւրոպայում երկիւղ է պատճառում, թուլացնում է նրա՝ դէպի Բօլղարիան տածած համակրութիւնը, և որ վճռական րոպէին կարող է նրան միայնակ թողնել, և կամ համաձայնութիւն կայացնել Ռուսիայի հետ, որ հնարաւոր է Բերլինի դաշնագրութիւնը և Կ. Պօլսի արձանագրութիւնը ուշադրութեամբ գործադրելով։ Րօբիլանը ոչ մի խորհուրդ կարող չէ տալ պատգամաւորութեան, որովհետև ուզում է խոյս տալ Բօլղարիայի ներքին գործերին միջամտելու ստուերից անգամ։ Բօլղարիան՝ ինքը պէտք է մտածէ նպատակին հասնելու ամենաճիշտ միջոցները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 7 Յունվարի։ «Journal de St. Pétersbourg»-ը հաղորդում է, որ պետութիւնների մեծ մասը ցանկանալով խաղաղութիւնը պահպանել, դէմ չեն այն ճիգերին, որ գործ են դրվում բօլղարական ճգնաժամը հեռացնելու դիտաւորութեամբ։ Բանը գլխաւորապէս նրանումն է, որ աշխատում են Բօլղարիայում օրինական կարգը վերականգնելու։

ԼՕՆԴՕՆ. 8 Յունվարի։ Թօշէնը Լիվէրպուլի ընտրողներին ուղղած ճառի մէջ ասաց. «Ինչպէս գերմանական պետական կանցլերն է աշխատում խաղաղութիւնը պահպանելու, նոյնպէս էլ նոյն ուղղութեամբ աշխատում է և Անգլիան, որը երբէք և իցէ ցեղի կամ անձի համար աշխատած չէ Եւրոպայում խճճումներ առաջացնել։ Բրիտանական կառավարութիւնը երբէք ջանացած չէ Բատտենբերգեան Ալէքսանդր իշխանին կրկին բօլղարական գահ բարձրացնելու։ Նոր իշխան ընտրելու գործում կառավարութեան քաղաքականութեան հիմքը Բերլինի դաշնագրութիւնն է կազմում։ Կառավարութիւնը մի այնպիսի բան չի անիլ, որ առանձնացած մնայ միւս պետութիւններից՝ որ իսկապէս աշխատում են խաղաղութիւնը պահպանել։ Անգլիան ամենևին անտարբեր չէ դէպի Բօլղարիան, թէև գործի սկզբնաւորութիւնն էլ ինքը անել չէ կամենում։

ԲԵՐԼԻՆ. Կայսրին ուղղած պատասխանագրի մէջ, որ պրուսական սէյմի մեծամեծների ժողովը ընդունել էր միաձայն, ասուած է. «Պրուսական բանակն իւր ներկայ դրութեամբ ստեղծել է կայսրը։ Մեծամեծների ժողովը բոլոր երկրի հետ խոր վշտացած է, որ կայսրի առաջարկութիւնը երկրի զօրքի պատրաստականութեան մասին ընդունվում է միայն պայմանով, որ անհնար է թոյլ տալ։ Պրուսական ժողովրդի համար ոչ մի զոհաբերութիւն ծանր չի լինիլ միայն թէ զօրքի պատրաստականութիւնը պահպանուի»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. «Нов. Вр.»-ն հաղորդումէ, որ Սիբիրի ուսումնարանական շրջանի վերատեսուչ Ֆլօրինսկին եկել է Պետերբուրգ յայտնելու համար, որ Սիբիրում բացուելիք համալսարան մտնողների թիւը որովհետև քիչ կլինի Սիբիրիայի գիմնազիաներից, ուստի անհրաժեշտ է թոյլ տալ, որ սեմինարիայի աշակերտներն էլ մտնեն համալսարան՝ միայն արգիլուի նրանց ուրիշ համալսարան մտնելը։ Եթէ այս պայմանը ընդունուի, համալսարանը կբացուի աշնան։

ՀՌՕՄ. Մինիստրների խորհրդի նախագահ Դէպրէտիսը բօլղարական պատգամաւորներին յայտարարեց, որ խոհեմութեամբ և զաշնագրերին հետևելով հեշտութեամբ կարելի է ներկայ դժուարութիւնների առաջն առնել։

Երէկ երեկոյեան այստեղի ուսանողները փորձեցին համակրական ցոյցեր անել, բայց արգիլուեցան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 9 Յունվարի։ Լրագիրների տալով տեղական ինքնավարութիւններին վերաբերեալ հարցերի քննութիւնը աւարտուել է և շուտով կը յանձնուին պետական խորհրդի քննութեան։

ԼՕՆԴՕՆ. Մինիստրութեան աւելի մօտ եղող «Globe» թերթը ասում է թէ այժմ գուցէ բօլղարական պատգամաւորները համոզուեցան, որ Անգլիան, Գերմանիան, Իտալիան և Աւստրիան ցանկանում են, որ Արևելքում այսուհետև համաձայնութիւնների հիմք լինի Բերլինի դաշնագրութիւնը և չափազանց վախենում են Բալկանեան թերակղզու վերայ ծագելիք պատերազմից։ Լրագիրը կարծում է, որ Ֆ. Դուռը այնպիսի միջոցներ կառաջարկէ, որ կարող են բաւականացնել Ռուսիային, իսկ Ֆրանսիայի շահերը այնքան շօշափվում են արևելքում, որքան դրանք կը նպաստեն Գերմանիայի վերաբերմամբ նրա ունեցած մտադրութիւններին։

ՍՕՖԻԱ. 10 Յունվարի։ Բօլղարական բոլոր 8 հետևակ գունդերը մեծացրել են մի մի գրուժինայով, իսկ միւս կարգի զինուորներն էլ աւելի ևս կատարելագործել և վերափոխել են։ Նոյնպէս միջոցներ են գործածում պահեստի և կամաւոր զօրք կազմելու։ 25 միլիօնի փոխառութիւնը յաջողուել է։ Լուր է տարածուած, որ մեծ դէպքեր են տեղի ունենալու Բօլղարիայում։

ԲԵՐԼԻՆ Յունվարի 11.—«Nordd. Allg. Zeit».-ը հաղորդելով, որ բազմաթիւ մարակոցներ են շինուել սահմանակից նահանգներում, գրանից եզրակացնում է, որ Ֆրանսիան մեծ քանակութեամբ զօրք է կեդրոնացնում Գերմանիայի սահմաններում։

ՀՌՕՄ. Կ. Պօլսից ստացուած լուրերը տեղիք են տալիս կարծելու, որ բօլղարական խնդիրը խաղալ լուծումն կստանայ։

Կ.-ՊՕԼԻՍ. Այստեղ համոզուած են, որ բօլղարական խնդրակալութիւնը պատրաստ է հրաժարական տալու, եթէ հանգստացուցիչ խոստումներ ստանան բօլղարական գահի կանդիդատութեան մասին։ Բօլղարիայում միացեալ մինիստրութիւն կազմելը, որի մէջ կը մտնի և Ցանկօվը, հնարաւոր է համարվում։ Այնուհետև տեղի կունենայ ազգային ժողովի արձակումը, իսկ յետոյ տեղի կունենան նոր ընտրութիւններ։

ԲԵՐԼԻՆ. Կայսրը լսելով մեծամեծների ժողովի ուղերձը, պնդեց բանակը զօրացնելու անհրաժեշտութեան վերայ—վտանգը քչացնելու համար։

ՊԱՐԻԶ. Պարլամենտի բիւդջէի յանձնաժողովը մերժեց ֆինանսների մինիստրի առաջարկած բիւդջէն։

ՕԴԵՍՍԱ 12 Յունվարի.—Նահանգական դատարանի նախագահը բոլոր նօտարներին առաջարկեց, որ երկու շաբաթուայ ընթացքում արձակեն նօտարական գրասենեակներում ծառայող հրէաներին պաշտօնից։

ՀՌՕՄ. Բօլղարակ ան պատգամաւորները դուրս եկան դէպի Կ.-Պօլիս։

ՊԱՐԻԶ. Ֆրանսիական զօրքերը չարդեցին Ճոնկինի ապստամբներին, որոնք 500 հոգի սպանուած թողնելով, փախան պատերազմի դաշտից։

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ. Բատտենբերգեան Ալէքսանդր իշ. գնաց Միլան, ուր, ինչպէս ասում են, պիտի տեսակցի Կայզէրվի հետ։

ՊԱՐԻԶ. «Հաւատք» գործակալութեան Լօնդօնից հաղորդած լուրերին նայելով, պետութիւնները համաձայնուել են բօլղարական խընդրի մասին խորհրդակցելու. միայն Անգլիան նկատողութիւն արաւ հարցերի հերթակալ քննութեան վերաբերմամբ, և պնդում է, որ ամենից առաջ վճռուի բօլղարական իշխանի ընտրութեան խնդիրը, մինչդեռ Ռուսիան ամենից առաջ պահանջում է ներկայ կառավարիչների հրաժարականը։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Մոսկուա. Ս. Մ-ին։ Շնորհակալ ենք բարևների համար։ Ձեր նամակը ստացել ենք։ Ձեր նամակի մի կէսը մեզ չատ և չատ զարմացրեց. ամեն բան իմացել էինք, այդ էլ նոր ենք իմանում և այն էլ ձեր նամակից միայն։

—

Բագու.—Մ. Ա. Այո, ուղարկվում է չարունակ։

Խմբագիր-հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՍԿԱԿԱՆ Է ՄԻԱՁՆ ԴՈՐԾԱՐԱՆԻ ԱՁՍ ԴՐՈՇՄՈՎ

ՄԻ՛ ՀԱՋԻՐ

Մեղրա բուսեղէն Մայլց-էկստրակտ և կօնֆեկտներ Լ. Դ. Պիաչ և ընկերութիւն Բրեսլաւում դեղ է հազի, խռիսի, խրտպոտութեան, օրկորի, և կրծքի հիւանդութեան դէմ, սկսած հասարակ բակացուից մինչև թոքախտութիւնը։

Մի չիչի գինն է 1 ր. 25 կ. և 2 ր. 40 կ. կօնֆեկտները 30 և 50 կոպէկ. ճանապարհածախսը առանձին է հաշվում։ Ռուսիայում գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում վ. Ալուբինի մօտ, Ստարեմաննայա, № 4, իսկ Թիֆլիսում ծախվում է կով. կասեան առևտրական ընկերութեան գեղօրէից մազազինում։ (Ц. 22111) 10—5

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Ուղիղ և կանոնաւոր երթևեկութիւն Մարսէլլի և Բաթումի մէջ։

Զորեքշաբթի, յունվարի 21-ին, «ԱՆԱՏՕԼԻԱ» (Anatolie) շոգենաւը, նաւապետ «ԲՕՇԷԼ» (Boschel) դուրս կը գայ Բաթումից դէպի Տրապիզօն, Օրդու, Սամսօն, Կ. Պօլիս և Մարսէյլ։

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալներին Բաթումում՝ պ. ԳԱՐԱՆԻՕՆԻՆ, Թիֆլիսում՝ պ. ՐԷՆՕԻՆ, նախկին գալերէյա Ազբուռնների № 103. 3—1

Дозволено цензурою Тифлисъ, 13-го Января 1887 г. Տպարան Մ. Գ. Օտինեանց Типографія М. Д. Ротиніанцъ Гол. пр., д. № 41